

2. ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն արտացոլում է հին հայերենի նախամիջին ենթաշրջանի իրողությունները: Աշխատության լեզվի ձևաբանական առանձնահատկությունները քննվում են հին հայերենի դասական ենթաշրջանի համեմատությամբ և հակադրությամբ:

Ուշադրության հիմնական առարկան են թվակազմության, հոլովակազմության (նաև՝ գերանվանական), բայական (ենթա)համակարգի կրած որոշակի փոփոխությունները՝ կապված հայերենի զարգացման ընդհանուր օրինաչափությունների և քննարկվող հեղինակի լեզվական առանձնահատկությունների հետ:

1. Թվակարգը (թվի քերականական կարգը) հին հայերենի նախորդ երկու ենթաշրջանների համեմատությամբ չի ցուցաբերում ձևաբանական արտահայտության և բովանդակության պայմաններում դրսևորված ակնհայտ տարբերություններ. չկան հոգնակերտ նոր մասնիկներ: Հին հայերենի՝ լայն կիրառություն ունեցող -ի (-ց, -ս) հոգնակերտ մասնիկների կողքին մեկ անգամ դրսևորվում է -եք մասնիկը, ինչպես, օրինակ՝ «Եւ եկեալ իշխանին Հաշտենից, ասէ. «Ձի՞ եղեն պարսիկքն»: Եւ նոքա ասեն. «Աւասիկ են ընդ Հայե-րայդ»: Եւ կոչեցաւ անուն տեղոյն Հայկերտ» (էջ 53)¹:

Գրեթե հին հայերենի օրինաչափությունների սահմանում են մնում հավաքական գոյականների, անհոգնական, անեզական բառերի դրսևորման եղանակները:

Անհոգնական բառերը, որոնք սովորաբար բաժանվում են ա) անհոգնական անձնանունների, տեղանունների, մականունների, բ) վերացական հասկացությունների անունների, գ) նյութական աշխարհի եզակի առարկաների անունների, լայն կիրառություն ունեն նաև «Տարոնի պատմության» մեջ²: Առաջին խմբի բառերից հիշենք Գալլ Վանան, Գորգ Շատախօս հատուկ անունները, Ասուր, Փանդիկ (սփանդանեւ նոր բառից) մականունները և այլն:

Հայերենում հոգնակիությունն արտահայտվում է նաև հավաքական բառերի միջոցով, որոնք բաղադրվում են որոշակի մասնիկներով. «Այդ մասնիկները երկու տեսակ են՝ 1) զրաբարի բուն հոգնակերտի՝ ք-ի հետ բաղադրված մասնիկներ.... և 2) այլ կարգի մասնիկներ: Այս երկու կարգի մասնիկների մի մասը հանդիպում է ուշ շրջանի զրաբարում կամ միջին հայերենում, բայց

¹ Բնագրային օրինակները վերցնում ենք Հ. Մամիկոնյանի Պատմության հետևյալ հրատարակությունից՝ «Յովհաննես Մամիկոնեի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832:

² Յ. Т у м а н я н, Древнеармянский язык. М., 1972, стр. 175 և. Հ. Պ ե տ ռ օ յ ա ն, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 44—52:

անշուշտ իր հիմքերն է ունեցել և ավելի վաղ շրջանում...»³։ Ք-ով բաղադրված մասնիկներն են՝ -այ՛, -եայ՛, -ան՛, -ի՛, -ի՛ն՛, -ոյ՛, -ուն՛, մյուս՝ այլ հոգնակերտ-հավաքական մասնիկները՝ -ան, -անի, -եան, -եար, -եր, -իկ, -ական, -ենար, -որայ, -որեայ, -տի, -ոտի, -ուի, -ստան⁴։

Ետգատական գրաբարի և նախամիջին հնթաշրջաններում հոգնակերտ-հավաքական մասնիկների թիվն ավելանում է⁵։

«Տարոնի պատմության» լեզվում հավաքական գոյականները բավական քիչ են։ Եղածներն էլ կազմվել են -անի՛, -եան՛/-են՛, -որայ, -տի մասնիկներով, ինչպես, օրինակ՝ «Ձայս ամենայն ասացին, և ի դէպ էր վասն իրացն, որ և կոչեցաւ անուն գեղջն Շիրականի՛» (էջ 42)։ «Եւ առեալ Վահանայ զԵպիսկոպոսունսն մամիկոնենից և զՊալունեաց և զՀաշտենից, և եկն ի վանսն Գլակայ...» (էջ 43)։ «...արձակէր հարկապահանջս ի Հարք և ի Հաշտեան՛ և ի Տարոն» (էջ 30)։ «...քանզի իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնենից՝ կտրեաց զերկու աւանսն ի վանացն...» (էջ 12)։ «...ես Յովհան մամիկոնեան եպիսկոպոս, երեսներորդ հինգերորդ ի Զենորայ առաջին եպիսկոպոսէն մամիկոնենից...» (էջ 60)։ «Իշխան Արծրունեաց... շինեաց բազում եկեղեցիս և վանօրայս...» (էջ 9)։ «...գտանէին սպանեալ պարսիկքն՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի՝ չորեքհազար» (էջ 36)։ «...որք ընդ իմով իշխանութեամբ էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս...» (էջ 50) և այլն։

Միշտ չէ, որ բառերն ունենում են ձևա-իմաստային համամասնություն. հանդիպում են դեպքեր, երբ բառերն ձիմաստով եզակի են և ձևով՝ հոգնակի⁶։ «Տարոնի պատմության» մեջ անեղական բառերը համեմատաբար շատ են կիրառվում՝ դրսևորվելով հիմնականում -ան՛, -ելի՛, -ի՛, -ի՛ն՛ մասնիկներով, ինչպես, օրինակ՝ «Իսկ նա վասն խօթութեան պատճառաւաց ի սենեակ մտեալ, զՎահան միայն թողոյր առ իւր» (էջ 24)։ «...և եթէ սիրոյ պատճառաւօք եկիր, զիմ քաղաքդ է՞ր շինեցեր և ամրոցս» (էջ 31)։ «...և տունալ նոցա գանձս և երիվարս՝ արձակեցին ի պարսիկս, լինել զրուցատարս սփանչելեացն՝ որ հանդիպեցաւ...» (էջ 53)։ «Յիշեա, ասեն, զԵրախտիս մեր. և որպէս ի հեռուստ օգնեցեր, ի մոտոյս մի՛ վերջանար ի մէջը» (էջ 40)։ «...և ասէ ցիշխանն. «Աւադիկ է տուրսդ»։ Իսկ նա ասէ. «Հաւանիմ տոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ ի Քարքէոյ...» (էջ 38)։ «Սա բազում անգամ բարիս խոստանայ, և բազում անգամ չարիս...» (էջ 43) և այլն։

2. 2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզվի անվանական և դերանվանական բոլոր թեք ձևերը ներկայացնում են մի կողմից՝ դասական գրաբարից եկող ընդհանուր օրինաչափությունները, մյուս կողմից՝ նախա-

3 Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հին հայերենի հոլովման սխառմը և նրա ժազումը, Երևան, 1959, էջ 85—86։

4 Նույն տեղում, էջ 86—87։

5 Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Վիեննա, 1852, էջ 47—48, A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 85; К. П а т к а н о в, Исследование о составе армянского языка, СПб., 1864, стр. 30—32; 2. Ա ճ ա ո յ ա ն, Կիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 529—530, Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 86, Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1964, էջ 21, Э. Т у м а н я н, Նշվ. աշխ., էջ 175—176, 2. Պ ե տ ր ո ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 70—76։

6 2. Ա ճ ա ո յ ա ն, Նշվ. աշխ., էջ 856—870, Մ. Ա ս ա տ ր յ ա ն, Անեղական բառերը հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 124—135)։

միջին ենթաշրջանում վերջիններիս կրած փոփոխությունների որոշ մասը, որ մուտք գործելով հեղինակի լեզվի մեջ՝ արտացոլում է հայերենի համապատասխան երևույթների զարգացման միտումները:

Ա) Դասական գրաբարում կանոնավոր ի հոլովման պատկանող առօր բառը այստեղ շեղվում է դեպի ո հոլովումը, իսկ սպաս բառը՝ ցուցաբերում է ի||ու հոլովիչների զուգահեռություն⁷: Օրինակ՝ «...և ինքն պատրաստի արարեալ զդարանակալսն, հրամայեաց ծառայիցն՝ կտրել զերիվարսն առօռոյ պատճառաւ» (էջ 23): «...և զարդարեաց զնա հրաշալի սպասիւիք և կազմութեամբ» (էջ 42): «...և զսուրբ խաչն գերեաց, և առեալ զնաց ի պարսիկս, եղեալ ի պահեստի զսուրբ խաչն հանդերձ սպասուիք մինչև յեկեթն և ի տասն ամի թագաւորութեան իւրում» (էջ 54):

Հայ մատենագրության մեջ առաջին անգամ այս երկում կիրառված սապոն բառը հոլովվելով ի հոլովիչով լայնացնում է այդ հոլովման պատկանող բառերի շրջանակը: Օրինակ՝ «...և դարձեալ զսապոնի գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրաց գիշահոտ հալան և զարինաթաթախ հանգերձսն լուանալ տուաք և ագաք» (էջ 37):

Բ) Պարզ ա հոլովման պատկանող Վաշդեան անձնանունը դրսևորում է ա||ո հոլովիչների զուգահեռություն: Օրինակ՝ «Բայց որդին նորա Տիրան հրամանաւ Վաշդեեայ... գնաց ի դուռն խոսրովայ...» (էջ 56): «Զոր դիպօղ ժամանակ գտեալ իւր՝ որդին Վաշդեեայ Զոշիկ վրաց իշխանն» (էջ 58):

Վարագ անձնանունը բխում է վարագ հասարակ գոյականից: Վերջինս դասական գրաբարում պատկանում էր ու հոլովման և երկրորդաբար ենթարկվում էր ի-ա հոլովման⁸: Այստեղ Վարագ հատուկ անունը թեքվում է ա հոլովիչով: Օրինակ՝ «Կերան գազանք զմարմինս դիականցն Վարագայ և գիրացան» (էջ 42): «Իսկ նա ընդդէմ դարձաւ և կտրեաց զզուլս երիվարին Վարագայ և ընկէց» (էջ 52):

Գ) Ո հոլովման պատկանող մի քանի հատուկ անուններ նույնպես ունեն զուգահեռ հոլովիչներ՝ Մուշ-Մշոյ, բայց նաև՝ Մշու, Մամիկոնեան-Մամիկոնեեայ, նաև՝ Մամիկոնեեից: Օրինակ՝ «...առեալ զՄուշեղ զտէրն Մշոյ և խութայ և Տարօնոյ...» (էջ 13): «...ապա ջինեաց զեկեղեցին՝ որ ի վերայ բլերն Մշու...» (էջ 55): «...որ քսան և իններորդ էր ի սրբոյ Գրիգորէ, և յիշխանութեան Վահանայ Մամիկոնեեայ» (էջ 56): «...քանզի իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնեեից՝ կտրեաց զերկու աւանսն ի վանացն» (էջ 12):

⁷ Նախորդ մատենագիրներից, օրինակ, Մ. Խորենացին չունի սպաս բառի որևէ կիրառություն, իսկ Ե. Կոտո բառս չի կիրառվել թեք ձևերով, Ղ. Փարպեցին ունի սպասուիք ձևով միայն («Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տպագրիւ. 1904, էջ 38): Եղիշեն կիրառել է սպասու, սպասուիք թեք ձևերը («Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 160, 200 և 69), իբրև ձևաբանական տարբերություն ունի սպասիւիք (էջ 69) ձևը: Վերոհիշյալ մատենագիրները չունեն առօր բառի որևէ կիրառություն:

⁸ Հմմտ. Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 314: Եղիշի մոտ, օրինակ, հանդիպում ենք վարագ հասարակ գոյականի՝ եզակիում ի հոլովմամբ. «Որպէս վարագի... ուտի միսն, և ոչ վնասի» («Եղիշէի Կողբացայ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 66): Ղ. Փարպեցին այս բառն ունի հոգնակի կիրառությամբ ա հոլովիչով՝ վարագացն (էջ 10):

Դասական գրաբարում մուրն գոյականը պատկանում էր ո հոլովման, Հետագայում ենթարկվում է նաև ի-ա խառը հոլովման⁹։ Այս պատմության մեջ բառը կիրառվում է մուրն-մրնով և մուրն-մրնին, մրնոօf (<մրնաօf) և այլն ձևերով։ Օրինակ՝ «...և հասնալ Սմբատայ եհար մրնովն ի վերայ գա-գաթսնն և դոգեաց զսաղաւարտն, և զխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սա-ղաւարտն մրնին Սմբատայ...» (էջ 35)։ «...և սկսան մրնոօf հարկանել, և ոչ գտին» (էջ 20)։

Բլուր գոյականը դասական գրաբարում պատկանելով ո հոլովման, այս-տեղ հանգես է նկել ներքին թեքման ե հոլովմամբ, ինչպես, օրինակ՝ «...և ապա ի վաղին սկսան մեւս զօրս Պարսից գալ ի վերայ բլւրն ի նոյն տեղին» (էջ 27, այլև՝ 34, 35, 40, 55)։ Բլւր հոլովաձևը նորակազմություն է, ո պարզ հոլովմամբ այն չի գործածվել Հ. Մամիկոնյանի կողմից։

Դ) Դասական գրաբարում ու հոլովման ենթահամակարգը որոշակի օրի-նաչափությունների կողքին ուներ խախտումներ։ Հ. Մամիկոնյանի լեզվում նույնպես այս հոլովման պատկանող բայերը հանդես են եկել ոչ միայն հիմ-նական օրինաչափություններով, այլև շեղումներով։ Այսպես, բիւր բառը հիմ-նականում հոլովվում էր ու հոլովիչով՝ ունենալով նաև ո հոլովատիպ¹⁰։ Այս Պատմության մեջ բառս ունի ի-ա հոլովիչի տարբերություն՝ կիրառված բիւ-րոօf (<բիւրաօf) ձևով։ Օրինակ՝ «...յիշեաց խոսքով զուխտն Մօրկայ՝ որ ի մէջ նորա և իւրն, և եկն էանց ի Յոյն շորեքտասան բիւրոօf, և բրեաց բազում աւան, և գաւառն և դարձաւ» (էջ 15)։

Դասական գրաբարում մահ բառը անուն և ձեղուն բառերի նմանությամբ հոլովվում էր մահուան, մահուանց, մահուանց և այլն, ինչպես նաև մահու, մահուց և այլն կրկնաձևերով։ Վերջինները համեմատաբար ավելի տարած-ված էին համարվում դասական գրաբարի համակարգում¹¹։

«Տարոնի պատմության» մեջ մահ գոյականը կիրառվել է յոթ անգամ մահու (էջեր՝ 14, 14, 16, 16, 18, 22, 31), մեկական անգամ մահուն (էջ 59), զմահու (էջ 14) և երեք անգամ Մահու (հմմտ. Մահու ագարակ՝ էջ 34, 48, Մահու բլուր՝ էջ 36, տեղանունների մեջ) ձևերով, իսկ մահուան, մահուանն ձևերով՝ մեկական (էջ 56, 14), մահումբ (էջ 18, 20)՝ երկու անգամ, ինչպես նկատելի է, այստեղ մահ-մահու թեքումը մահ-մահուան-ի համեմատությամբ ավելի տարածված է։ Օրինակ՝ «Յիշեա զոր արեամբ քով գնեցեր և մահումբ քով որդեգիրս արարեր, մի եղէց իշխան ի վերայ հօտի քո...» (էջ 18)։ «...և

9 Գ. Զահուկյանը մուրն բառի համար ո-ի հետ նշել է նաև ի-ա հոլովիչի առկայությունը, որը հիմնավորվում է նաև այս տվյալով (Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 278)։ Մուրն բառը հանդիպում է Մ. Խորենացու մոտ մրնով ձևով («Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հա-յոց», Տփղիս, 1913, էջ 290), իսկ իբրև ձևազարկան տարբերակ՝ մրնաօf ձևով։

10 Եղնիկն ու Ղ. Փարպեցին ունեն համապատասխանաբար բիւրոց (էջ 155, 217) և բիւրց (էջ 51) ձևերը։

11 Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 32։ Ինչպես նշում է նաև Ա. Ա. Աբրահամ-յանը, ըստ Սա. Մալխասյանցի՝ մահ բառի ավելի նախնական ձևն էր մահուն, որն էլ անուն, ձեղուն գոյականների հետ կազմում էր որոշակի խումբ (հմմտ. Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 25—26)։ Եղնիկն ունի մահուան ձևի 23 կիրառություն, իսկ մահու՝ 13։ Փարպեցին նույնպես զուգահեռաբար կիրառել է մահուան||մահու ձևերը, ընդ որում՝ 7 անգամ մահու թեքումով, Խորենացին ունի՝ 8 անգամ մահու, 3 անգամ մահուան, որոնցից մեկական անգամների՝ իբրև ձևազարկան տարբերություն։ Եղնիկի մոտ մահուան ձևով կիրառությունները գերադասելով են մյուսին։

ամենայն խստութեամբ տուեալ պատասխանի, և ի լոյս ածեալ զմահու դարանն, թրակոծեցին զնա...» (էջ 14): «Եւ իբրեւ վճարեցին պատերազմն հրամայեաց ծածկել զնոսա ի ձորս և ի հեղեղատս և կոչեցաւ բլուրն Մահու բլուր» (էջ 36) և այլն:

Շեղումներ են ցուցաբերում նաև հետևյալ բառերը՝ ճակատ-ճակատովն (փխ. ճակատուն), դրօշ-դրօշացն (փխ. դրօշուցն), զգեստ-զգեստիցն (փխ. զգեստուցն)¹²: Օրինակ՝ «Իսկ նորա կալեալ զպատգամաւորսն, հրացոյց շամփուր մի երկաթի և եղ պսակ շուրջ ճակատովն...» (էջ 47): «...մինչև զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ձայն փողոցն և ի տեսս դրօշացն» (էջ 35): «...և որք ընդ դուռն յայնկոյս անցանէին, զայն ի տունս արկեալ ի զգեստիցն կողոպտէին և զգլուխսն կտրէին...» (էջ 22):

Դասական գրաբարում աչ բառը ու հոլովման էր ենթարկվում, թեև ուներ նաև՝ ո, հետևաբար՝ ի հոլովումներ¹³: Այստեղ բառը կիրառվել է ո հոլովումով, ինչպես, օրինակ՝ «Ողջ լեր ի դիցն արոյ» (էջ 37): «...և ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբ արոյ՝ ի բաց ընկենոյր» (էջ 33):

Ե) Հ. Մամիկոնյանի պատմության մեջ կան այնպիսի բառեր, որոնք ակնառու տարբերություններ են ցուցաբերում դասական գրաբարի ի-ա խառը հոլովման ենթահամակարգից: Այդպիսին են հետևյալ բառերը՝ անտառ-անտառովն (փխ. անտառան)¹⁴, վայր-վայրուցն (թեև կան նաև՝ վայրի, վայրիւն)¹⁵, բերդ-բերդին, բերդիցն¹⁶, նեղ-նեղով (փխ. նեղի)¹⁷: Օրինակներ՝ «Իբրեւ խմբեցաւ պատերազմն յեզերս Արածանոյ, առ անտառովն՝ որ կոչի Կաղամախեաց բլուր...» (էջ 50): «...գուցէ ոք թշնամի, ասէ, յարձակիցի և դուր չէք ընդել վայրուցն» (էջ 23): «...այլ տուր ի ձեռս իմ չորեք հազար այր, որ գնամք ի վերայ ամուր բերդիցն՝ ուր մտերիմք նորա են և գանձքն» (էջ 21): «Եւ ինքն սկսաւ կոչել զիշխանսն խաբեութեամբ ի խորհուրդ և նեղով այնպէս առնէր...» (էջ 25):

Զ) Փոփոխություններ են նկատվում նաև դերանվանական հոլովման մեջ: Հաճախ իւր դերանվան հետ հանդես է գալիս ն հնչյւլթը, որն Ա. Այսերյանի ճիշտ դիտողությամբ հող չէ, ինչպես՝ ի մէջ նոցա և իւրն, ունէր ընդ իւրն: Օրինակ՝ «...յիշեաց Խոսրով զուխտն Մօրկայ՝ որ ի մէջ նոցա և իւրն, և եկն էանց ի Յոյնս չորեքտասան բիրօք...» (էջ 15):

12 Հ. Աճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Երևան, 1930, էջ 566—569, Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 313: Դրօշ բառը ուղղականով օգտագործել են Եզնիկն ու Խորենացին, իսկ Եղիշեն՝ դրօշիցն (էջ 96) և որպես ձեռագրական տարբերություն՝ զրաւշուց||զրաւշուց: Փարպեցին ունի դրօշիցն (էջ 72):

13 Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 272: Եզնիկն ու Եղիշեն չունեն աչ բառի թեք ձևերով կիրառություն, Խորենացու և Փարպեցու մոտ կան միայն ա հոլովիչով:

14 Հմմտ. Հ. Աճ ա ո յ ա ն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 452, Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 284: Անտառ բառը չկա Եզնիկի, Եղիշի, Փարպեցու մոտ, Խորենացին ունի միայն անտառին (էջ 285, 294) ձևը:

15 Հմմտ. ՀԱԲ, հ. 1, էջ 1070, Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 297: Եղիշեն վայր բառը չի կիրառել թեք ձևերով, իսկ Խորենացին ունի՝ վայրի (էջ 359), ի վայրի (էջ 339), Եզնիկը՝ վայրացն (էջ 106), վայրաց (էջ 160), Փարպեցին՝ վայրին (էջ 123), ի վայրացն (էջ 102):

16 Հ. Աճ ա ո յ ա ն, Նշում է ի-ա հոլովում (հմմտ. ՀԱԲ, հ. 1, էջ 142):

17 Հ. Աճ ա ո յ ա նի կողմից նեղ բառին ի-ա կամ հետևաբար՝ ի, ո հոլովիչների հատկացումը այս պատմությամբ հաստատվում է (ՀԱԲ, էջ 84): Եզնիկն ու Եղիշեն այս բառը չունեն, Խորենացու մոտ կա վասն նեղի (էջ 79), իսկ Փարպեցու մոտ՝ նեղով (էջ 75, 84) ձևերով:

Դասական գրաբարում այս ցուցական դերանունը հոգնակի սեռականում և տրականում ուներ կանոնավորապես այսց, այսոցիկ կարճ և երկար ձևերը, որոնց դիմաց այստեղ հանդիպում է համապատասխան իմաստով այսոց նոր ձևը: Օրինակ՝ «Եւ մինչ նոքա զայն պատերազմն անցուցին և վճարեցին, և յառաջն եկին այսոց, և նոքա գեռ չէին եկեալ ի Մծմալն...» (էջ 24): Այսպիսի ձևերի մասին Ա. Այտընյանը գրում է. «Այս ամենքն որ ստորին դարուց ռամկօրհներն սովորականներն են, մենք առաջին անգամ այս հեղինակի քով կգտնենք»¹⁸:

Դասական գրաբարի փոխադարձ դերանուններից անուղղական իրեբաց, զիրեբաց, իրեարս, իրեբոֆ (<իրեբաւֆ) ճիշտ ձևերի կողքին հանդիպում է նաև ընդ իրարս ձևի կիրառություն¹⁹: Օրինակ՝ «...և խմբեցաւ պատերազմն ընդ իրարս, մինչև զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս...» (էջ 35): «Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, և կամէին փախչել վահանեանքն, յորժամ նոցա միաբան աղաղակեցին...» (էջ 50):

3. Դասական գրաբարի բայական ենթահամակարգը նույնպես «Տարոնի պատմության» մեջ արտացոլվել է որոշ փոփոխություններով: Դրսեւորվել են դերբայական այնպիսի ձևեր, որոնք նորություն են դասական գրաբարի համեմատությամբ: Փոփոխություն է նկատվում նաև դիմավոր ձևերի հիմքակազմության, խոնարհատիպերի մեջ: Եղանակա-ժամանակային ձևերը ավելի փոխանցելի են դարձել նախորդ ենթաշրջանների համեմատությամբ: Նկատելի է ժամանակաձևերի ազատ կիրառություն միմյանց փոխարեն և մեկը մյուսի իմաստով: Վերջիններս հավաստում են դասական գրաբարում գոյություն ունեցող ժամանակաձևերի անկայուն կիրառությունների հետագա տարածումը:

Այստեղ փոփոխված բայաձևերի թիվը, բայերի ընդհանուր քանակի համեմատությամբ, այնքան էլ մեծ չէ և չի խախտում մեր պատկերացումները դասական գրաբարի խոնարհումների խմբավորումների մասին: Այսպիսի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ժամանակի ժողովրդագիտական կազմակերպության լեզվի ազդեցությամբ:

Ա) Անորոշ դերբայը, բացի դասական գրաբարում ունեցած կիրառություններից, այստեղ հանդես է եկել նաև բաղադրյալ ստորոգյալի կազմության մեջ հետևյալ կերպ՝ ի գալ են, ի տալ էֆ: Օրինակ՝ «Զի Յոյնք են ի գալ ի վերայ մեր, ասէ» (էջ 27): «Դուք ինձ վնասակարք էք, որ զտաճարսն այլ յայլել էֆ ի տալ...» (էջ 26):

Բ) Դասական գրաբարի համեմատությամբ Հ. Մամիկոնյանի լեզվում դրսևորվել են —ման մասնիկով բառեր, որոնք ունեն դերբայական իմաստ և համապատասխան կիրառություն: Այս մասնիկով բառերը՝ քաղմ...²⁰ <քաղումն, դաղման <դաղումն, բաղադրվում են այլ կարգի բառերի հետ, արտահայտում գործողության վիճակայնություն, մի տեսակ հարակատար դերբայի իմաստ՝ նախադասության մեջ գերազանցապես հանդես գալով բաղադրյալ ստորոգյալի շարահյուսական գործառնություն: Ունենք այսպիսի կիրառու-

¹⁸ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 125:

¹⁹ Ա. Այտընյանը այս կապակցությամբ գրում է. «Շատ հաճախ է դարձած զիրեբաց, իրեբաց, իրեբաց: Վերջին երկուսը դասական գրաբարի համեմատությամբ կանոնավոր են. զիրեբացը այս երկուս, թերևս լինի ընդ իրարս»:

թյունների ընդամենը չորս օրինակ՝ դրսևորված միմիայն թաղման և դաղման ձևերով: Օրինակ՝ «Ինքն վախճանեցաւ և կան թաղման առ Արծրունեաց իշխա-
նին, ի կողմն արեւից ճակատուն» (էջ 28): «...և կայ ի թաղման ի նմին տեղւոջն որ դեռ ևս Արձան կոչի անուն տեղինն» (էջ 28): «Եւ կայ ի թաղման ի դուն սրբոյ Կարապետին, առաջի սեմոցն» (էջ 33): «Որ և ի դաղման հա-
րեալ ամենայն երիվարացն, և հասեալ ի Սմբատայ, և բախեալ զտէգն ի վե-
րայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին...» (էջ 41):

Այս ման մասնիկը, անկասկած, ժազում է մամն մասնիկի հոլովածե-
վից²⁰: Բերված օրինակներում թաղման, դաղման ձևերը և սրանց բաղադրյալ
կայ ի թաղման, կան ի թաղման, ի դաղման հաւեալ կազմութիւնները, ըստ
երևութիւն, կապվում են հեղինակի ժամանակաշրջանի հայերեն ժողովրդա-
խոսակցական լեզվի առանձնահատկությունների հետ: Քանի որ հայերենի
որոշ բարբառներ ունեն նույնպիսի կազմութիւններ, ապա, հավանաբար,
այսպիսի ձևերի գոյութիւնը առնչվում է բարբառային-տարածքային (տե-
րիտորիալ) որոշ յուրահատկութիւնների հետ: Այս ձևերի գոյութիւնն ար-
ժեքավոր է ոչ միայն հեղինակի լեզվի, այլև՝ հայերենի պատմութեան ուսում-
նասիրութեան առումով:

Գ) «Տարոնի պատմութեան» մեջ հանդիպում ենք նաև «ած մասնիկով
հարակատար դերբայի: Օրինակ՝ «Գնացի և տեսի առ նմա զգիրսն, որ ի նույն
իննականն վանսն էր գրած և նա ի զօրաց ուստէք ունէր ի Պարսից կամ
յալոց ուրուք...» (էջ 50): Նկատի ունենալով այս հարցի Ա. Այտրնյանի ձիշտ
մեկնաբանութիւնը, Հ. Մամիկոնյանի լեզվի այս փաստը հայերենի «ած
մասնիկով հարակատար դերբայի մասին եղած նախնական տվյալներից
պետք է համարել, եթե ոչ ամենանախնականը²¹:

Դ) Դիմավոր բայաձևերի հիմքակազմութեան, խոնարհատիպերի կրած
փոփոխութիւնները հետևյալներն են.

Լսել բայը դասական գրաբարում ունեն անկանոն (զարտուղի) խոնար-
հում: Այստեղ հանդես է եկել իբրև ե խոնարհման կանոնավոր պարզ բայ:
Օրինակ՝ «...որ զմահն նորա լսեցեք, և զիմ կորովութիւնս ծանեար՝ զոր ետ
ինձ աստուած, զիա՞րդ իշխեցեր գալ ի վերայ եկեղեցւոյն աստուծոյ» (էջ 31):
Այս օրինակում լսեցեք բայաձևը նորակազմութիւն է:

Դասական գրաբարի ներգործական սեռի նեղնմ և չեղոք սեռի նեղիմ
բայերը «Տարոնի պատմութեան» մեջ կիրառվել են նեղեն (էջ 47), նեղէին
(էջ 28, 46, 47), նեղեցի (էջ 50), նեղեցաք (էջ 44), նեղեցան (էջ 44) և նեղա-
ցար (էջ 57) թեք ձևերով: Ինչպես նկատելի է, նեղեցի, նեղեցաք, նեղեցան
բայաձևերի դեպքում ունենք «եց, իսկ նեղացար բայաձևի դեպքում «աց ցո-
յականութիւն: Ստացվել է եց||աց զուգահեռ ցոյականութիւն: Ա. Այտրնյանը
նույնպես նեղացալ (<նեղացար) ձևը համարում է նորութիւն: Օրինակ՝
«...իսկ Վաշտեան գրեալ թուղթ առ Տիրան այսպէս. «Նեղացար պանդխտու-
թեամբ, արդ արի եկ՝ զի խորհեսցուք ինչ արժանի» (էջ 57):

Հ. Աճառյանը խիթ արմատից բխեցնելով խթալ բայաձևը՝ «խեթիւ նա-
յել» իմաստով առաջին անգամ կիրառված է գտնում այս պատմութեան մեջ²²:

20 Գ. Ջ ա հ ու լ յ ա ն, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 48:

21 Ա. Այտրնյան, նշվ. աշխ., էջ 126—127:

22 ՀԱԹ, հ. 2, էջ 364:

Իսկ նույն հատորում խեթ արմատից բխեցնելով խիթալ ձևը՝ հիշատակում է նախնական վկայություններ, ուր խիթալ բայը ունի «յոզս տանել, մտատանջվել» և «ծուռ կամ վատ աչքով նայել» իմաստները Այնուհետև Հ. Աճառյանը նշում է, որ խիթալ բայն ունի նաև այլ՝ «ցալի, սգալ» իմաստները՝ հանդիպելով միմիայն Հ. Մամիկոնյանի լեզվում²³։ Այստեղ ամենակարևորն այն է, որ Հ. Մամիկոնյանի լեզվում կիրառված խիթալսցեն (<խիթալ) բայաձևը շեղում է դասական գրաբարի կանոնավոր խթել (հմմտ. Հ. Մամիկոնյանն ունի նաև այս բայով կազմված ձևեր՝ խթեցին, խթեսցեն) բայաձևի կողքին։ Օրինակ՝ «...զազանք եղկեսցեն զիս և թռչնոց աղզ խիթալսցեն ընդ իս» (էջ 10)։ «Եւ իբրև խթեցին զշորիսն սրով և արկին ի բանակն, և ինքեանք զհետ մտեալ՝ զփող պատերազմին հնչեցուցին...» (էջ 45)։ «Զբազմութիւն դիւացն կապեսցեն ի տեղւոջս յայսմիկ, զի խթեսցեն զծուլացեալսն յաստուածապաշտութենէ...» (էջ 18)։

Դասական գրաբարի ա խոնարհման մօտենամ (նաև՝ մերձենամ) բայի կողքին կիրառվել է մօտիլ նորակազմությունը՝ լայնացնելով ի խոնարհման բայերի յուրուրը, Օրինակ՝ «Բայց նուիրակն և զդպիրն ինչ ոչ գտանէին յիրաց, զի Վահան ոչ ետ մօտիլ ի զօրացն, այլ առանձին յետոյ գային» (էջ 26)։

Մատչիմ բայն այստեղ դասական գրաբարի հրամայականի մատենայն|| մատեռո՛ւֆ կանոնավոր հոգնակիներին կողքին ունի նաև մատի՛ֆ նորագոյացությունը, Օրինակ՝ «Իսկ նորա ի բլուրն ելեալ, ասէր. «Ո՛ր էք քաջք, յառաջ մատի՛ֆ» (էջ 35)։

Ի խոնարհման փրծանիմ||պրծանիմ բայն այստեղ դարձել է ու խոնարհման՝ բայ՝ պրծնուլ, ինչպես, օրինակ՝ «...ասէ Վախատանգ. «Կաց հարճորդի, թէպէտ զբազումս ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուա ի ձեռաց քաջ արանցս...» (էջ 35)։

Ու խոնարհման մածնուլ, ուռնուլ բայերի դեպքում նկատելի է ի թույլ բաղադրիչի անկում անցյալ կատարյալի հիմքում՝ փոխանակ ի>ե հնչյունափոխության։ Օրինակ՝ «Եւ մածաւ սուրն ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել...» (էջ 40)։ «Կուզ կերեալ ուռաւ որպէս զարջ, և աղուէս հպարտ եղեւ քան զառեւծ...» (էջ 42)։

Այստեղ հասանել բայի հրամայական եղանակի եզակի թվի հա՛ս ձևի փոխարեն կիրառվում է մեկ անգամ հասի՛ր, ինչպես, օրինակ՝ «Ո՛ր ես Սմբատ որդեակ, հասի՛ր յօգն ծերոյս» (էջ 33)։

Լինել բայը հրամայականի հոգնակիում ունի լի՛ֆ նորակազմությունը (փիւ. լերո՛ւֆ, լիջի՛ֆ)։ Օրինակ՝ «Տուք զձեզ ի բլուրն, զի տեղին աշող է պատերազմի և անձնապահ լի՛ֆ մինչև մեր ղօրն հասանէ» (էջ 40)։

Դասական գրաբարում դառնալ, իմանալ բայերի հրամայականն էր դա՛րձ, դաճի՛ր, դաճաւո՛ւֆ և իմա՛, իմացաւո՛ւֆ, որոնց դիմաց այստեղ երբեմն ունենք դաճե՛լֆ, իմացե՛լֆ նորակազմությունները։ Օրինակ՝ «...և եա խրատ՝ թէ յորժամ նոքա ի ձեզ հային, դուք միաբան ի քաղաքն դաճե՛լֆ... և դուռն քաղաքին ի բաց թողէք...» (էջ 22)։ «...ապա թէ ոչ ձեզ այլ հնար իմացե՛լֆ» (էջ 37)²⁴։

²³ Նույն տեղում, էջ 361։

²⁴ Դաճե՛լֆ, իմացե՛լֆ ձևերը հետագայում արմատավորվում են որպես ժամանակակից հայերենի հոգնակի հրամայականի հիմնական ձևերը։

Դասական գրարարում փախչիմ բայը հրամայականի համար ուներ նաև փախեա՛յք, փախեո՛ւք բայաձևերը, իսկ սրանց դիմաց այստեղ հանդիպում ենք նաև փախի՛ք նոր բայաձևի, որը լի՛ք ձևի հետ միասին մի տեսակ օրինաչափությունների խախտման ու նոր միտումների դրսևորման հետքեր են ներկայացնում: Օրինակ՝ «...Ջի՞ սպառեցաք, փախի՛ք, որ մեք կոտորեմք» (էջ 48):

Այսպիսով, 2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն պարունակում է մի շարք կարևոր ձևարանական առանձնահատկություններ, որոնք դասական գրարարի համեմատությամբ և հակադրությամբ նորակազմություններ և զուգահեռ ձևեր են: Դրանք գրական լեզվի մեջ են ներթափանցում մեծ մասամբ ժամանակի հայերեն ժողովրդախոսակցական լեզվից: Այսպիսի ձևերի կիրառությունը նշանակալից չափով պայմանավորված է նաև հեղինակի լեզվի առանձնահատկություններով: 2. Մամիկոնյանը օգտագործելով լեզվի գրական և խոսակցական տարբերակների արտահայտչական հնարավորությունները՝ կարողանում է հասնել ոճական նշանակալից անհատականացման:

НЕКОТОРЫЕ МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЯЗЫКА О. МАМИКОНЯНА

В. Г. АМБАРЦУМЯН

Резюме

Морфологический строй «Истории Тарона» Ованнеса Мамиконяна (VIII век) в сопоставлении с классическим древнеармянским языком содержит некоторые именные (в том числе местоименные) и глагольные морфологические различия, которые являются либо нововведениями, либо параллелизмами. Они проникают в литературный язык из народно-разговорной речи VIII века. Значительную роль играют также авторский подход, свеობразие авторской речи.